

# ԸՆԹԵՐՑՈՂԷՆ՝ ԱՌ ԽՄԲԱԳԻՐՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Սրբազան Տէր Խոբրապի  
«Սինո» ամսաթերթի

Յեռուսաղեմ

Գերապատիւ Հայր,

Աստուածաշունչին աշխարհաբար հաշիւը կրէնով հրատարակուելուն, Տիրար Ծարմանեանին յայտնած կարծիքը Սինոյի 1930, նոյեմբեր՝ թիւ 11ին մէջ, հաճոյքով կարգաւորով, պարտք զգացի հետեւեալ իմ համեստ կարծիքս ալ հրատարակելու, այն յոյսով թէ ընդփոյթ հրատարակմանը սատարած պիտի ըլլամ, որուն կարիքը մանաւանդ ներկայիս մեծ անհրոժեշտութիւն մըն է:

Համակարծիք եմ Տիրար Ծարմանեանին թէ այս հսկայ ձեռնարկը կարելի է յաջողընել միմիայն համազգային նախաձեռնութեամբ. այսինքն ամէն հայ անհատէ նիւթական օժանդակութիւն մը ապահովելով:

Ուստի անհրաժեշտ է որ փութացուի կեղերնական յանձնախումբ մը կազմելու նրուսաղէմի Պատրիարքարանին վերահսկողութեանը տակ և մասնաճիւղեր՝ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ, Առաջնորդարաններու և կամ Բարեկործականի հովանաւորութեամբ:

Իմ կարծիքով, հրատարակութիւնը պէտք է ըլլայ երկու տեսակ. Ա. ը միջակ տառերով լաթիակազմ և զիւրամատչելի գին որոշելով առ առաւելն մէկ ու կէս տորթի իսկ Բ. ը խոշոր տառերով, ընտիր թուղթ, մեծածաւալ կաշեկազմ, որուն գինն ալ որոշել պիտեմէն հաւասարակշիւ սակովմը:

Նոյնպէս հանգանակութիւնը պէտք է ըլլայ երկու տեսակ. մին՝ պարզ նուիրատուութիւն, իսկ Բ. ը պայմանագրութիւն. այսինքն նախ քան հրատարակութիւնը որոշուած սակին 10 կամ 20% զիջելով գրողներին փոխարժէքը կանխիկ գանձել:

Հուսկ ուրեմն, նիւթականը՝ ժողովուրդէն, իսկ բարոյական օժանդակութիւնն ալ տեղւոյդ Սրբազան Հայրերէն սիրայօժար արամագրուելուն անկասկած ըլլալով կը սիրեմ յուսալ թէ խօսքէն դործին լծուելու ժամը հասած է և որքան շուտ, այնքան լաւ:

Յարմարագոյն ասիթէն օգտուելով հաճեցէք ընդունել Սրբազան Հայր, խորին յարգանայս հաւատարմեանս:

ԱՐՄԵՆԱԿ ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ

Աղեխանդիս, 23 Մարտ 1931

# Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿԱՆ ՄԱՍԻՆՆԵՐ

Վսեմ. Արմենակ Պէյ Կամսարական Աղեքսանդրոյ մէջ պատահական վաճառողէ մը գնած ըլլալով Ալլի մը մէջ ամփոփուած մանուկ Ս. Կիրակոսի մասունքը, Եգիպտոսի առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Արքեպի.ի խնդրանաց լրայ, նուիրեց Սրբոց Յակոբեանց Տաճարին:

Տ. Թորգոմ Արքեպս.ի այս տոթիւ Գեր. Պատր. Տեղապահ Սրբազանին ուղղած նամակէն քաղելով կու տանք Ալլին նկարագրութիւնը.

«Ալլին երկարութիւնն է իբր 30 սանդղիմ, վերնամասը, այսինքն դաստակին վերի ծայրը ունի 14 սանդղիմնոց շրջանակ մը, որ կը վերջաւորուի 17 փերուզ քարերով, ընդելուզուած ըստ մասին րեյլեարի ապարանջանով մը, որ փակցուած է ազուցուած տեղին լրայ. նոյնպիսի ապարանջան մը փակցուած է նաև դաստակին վարի մասին լրայ, ընդելուզուած՝ միով պակաս 14 նոյնպիսի քարերով: Վերի ապարանջանին ներքև, երեք կարգ երկաթաղիւր տառերով փորագրուած է սա յիշատակարանը. ՍԲ. Ա.ՁՍ ՆՈՐՈԳԵՅԱԻ ԶԵՌՍՄԲ ՄԵԼԻՔԻՍԵԹ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿ ՄՇՈՒ ՍԲ. ՈՎԱՆԷՍՍ ՎԱՆԻՅՆ ՈՐ Է ԲԱՉՈՒԿ ՏՂԱՅ ՄԱՆՈՒԿ ՍԲ. ԿԻՐԱԿՈՍԱ. ԹՎԻՆ ՈՄԳ (=1754) ԱՄԻՆ: Իսկ ամէնէն վարի ծայրը փակուած է դմբէթաձև և պտուտակաւոր կափարիչով մը, որուն կեղերոնը օղով մը հաստատուած է: Դաստակին վարի կէսին լրայ, ճակատի կողմը, կայ չիֆիճ իշի բանուած Ս. Կոյս մը, որ զիրկն ունի Յիսուս Մանուկը, և նստած է երկսիւն խաչածայր խորոնի մը ներքև: Նիւթն է արծաթ սոկիջրած, արուեստն է սաշկ կիւզկի: Դաստակին ափի կողմը քիչ մը ձմրուած կ'երևի»:

Գեր. Պատրիարքական Տեղապահ Սրբազանը այս նուիրական ընծայարկութեան ասթիւ օրհնութեան և շնորհակալութեան գիր մը ուղղեց Վսեմ. Արմենակ Պէյ Կամսարականի:

**ՌՊ. Է. Ս. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆՈՒԿԸ**

Ս. Կիրակոս Լիկաոնացոց Իկոնիոն քաղաքէն էր: Մայրն էր Յուզիտա, արքայական զարմէ բարեպաշտունի քրիստոնեայ այրի մը, որ իր միամօր զաւկին հետ կ'ապրէր Դիոկղետիանոս կայսեր ժամանակ: Դոմետիանոս գոտաւորը երբ Լիկաոնիա կ'երթայ քրիստոնեաները հալածելու, Յուզիտա զաւկին կեանքէն վախնալով՝ կը թողու իր ամէն ունեցածները և Կիրակոսի ու իր երկու նաժիշտներուն հետ խոյս կու տայ Իսաւրիոյ Սելեւկիա քաղաքը. այն տեղէն ալ Աղեքսանդրոս գոտաւորին երեսն կը փախչի Տարսոն: Բայց քանի մը օր յետոյ ետեւէն կը հասնի Աղեքսանդրոս ու կը հրամայէ իրեն բերել Յուզիտան: Այն ատեն երկու նաժիշտները կը լքեն իրենց տիրուհին ու կը փախչին քովէն: Իսկ Յուզիտա, մանուկը զրկած, արիութեամբ կը ներկայանայ գոտաւորին ու կը խոստովանի իր քրիստոնէութիւնը: Ատոր վրայ կը սկսին հարուածել զայն արջառաջիւրով, ու կը քերեն մարմինը մինչև գօտին: Այդ միջոցին Կիրակոս մանուկը մօրը կը նայէր և կու լար, և երբ մայրը իր տանջանքներուն մէջէն կ'ըսէր. «Ես քրիստոնեայ եմ և Տէր Յիսուսը կը պաշտեմ», քաղցրաբարբառ աղաւնիի պէս միւսնոյն խօսքերը կը մնջէր նաև սուրբ մանուկը: Դատաւորը տղեկը գիրկը կ'առնէ ու կ'ողոքէ զայն համբուրելով, բայց Կիրակոս կը դարձնէ երեսը անկէ ու մօրը կը նայի միշտ, և ձեռքով ու ոտքով հարուածներ կու տայ գոտաւորին որ թողու զինքը ու իր մօրը յանձնէ: Աղեքսանդրոս երբ կը հարցնէ թէ ի՞նչ կը խնդրես. «Ես քրիստոնեայ եմ» կը պատասխանէ հրեշտակային մանուկը: Կը զայրանայ բռնաւորը, կը բռնէ Կիրակոսի ոտքերէն ու աստիճաններէն վար կը նետէ կատաղութեամբ: Հոն գլուխը քարին կը զարնուի և արեան ճապաղիքներու մէջ կ'աւանդէ հողին: Այս տեսարանին առջև թէև կը ճմուռի մօրը սիրտը ու կը զաւարուին աղիքները, բայց կը գոհանայ Աստուծմէ որ իր որովայնին պտուղը իրմէ առաջ ընդունեցաւ մարտիրոսութեան պատիւը: Ապա երկաթէ քերէշներով նորէն կը տանջեն Յուզիտան և եռացեալ նաւթ կը լեցնեն ոտքերուն վրայ.

յետոյ զայլ մը անցընելով բերնին, կը տանին ու կը զլխատեն 304 կամ 305 թուականին: Յուզիտայի նաժիշտները զիշերանց կը գողնան իրենց տիրուհիին ու զաւկին մարմինները ու Տարսոնէն զուրս քարայրի մը մէջ կը զետեղեն: Ապա Մեծն Կոստանդիանոսի օրով կը յայտնուին անոնց զերեզմանները, և նշխարները կը սփռուին ամէն կողմ:

Հայաստանեայց եկեղեցին Կիրակոսի և Յուզիտայի համար յատուկ տօնի օր մը սահմանած է տարւոյն մէջ. և այդ օրը կ'երգուին ի պատիւ անոնց յորինուած երկու գեղեցկահիւս շարականներ, որոնց սկզբնաւորութիւններն են. «Յարմատոց բարեաց քաղցր շառաւիղ վերարուսեալ ծաղիկ հաւատոյ», և «Վարդագոյն վառեալ ծաղիկ ի նորատունկ բուրաստանի»:

Այսուհետև նոյն տօնին օրը զուրս պիտի հանուի այս մասունքը և ի պատիւ մանկահասակ սուրբ նահատակին և խոսնկով ու համբոյրով պիտի մեծարուի Ս. Յակոբեանց Տաճարին մէջ:

**ՔԷՄԱՆՉԻՍՏ ՌՈՒԲԵԷՆ**  
**Ի Ս. ՅԱԿՈՅ**

Երուսաղէմ ալ բախտն ունեցաւ վայելելու Քէմանչիստ Ռուբէնի **ՔԷՄԱՆՉԷ**ին դիւթանքը: Հանրային նուագահանդէսէն ետք. զոր տուաւ քաղաքիս մէջ, որ մեծապէս գնահատուեցաւ բլլայ հրէական բլլայ արարական շրջանակներէ՝ ընդունելով խանդավառ և անկեղծ գնահատանքներ անդական թերթերու մէջ, Պր. Ռուբէն շատ մեծ հասոյք մը պատճառեց նաև՝ Ս. Աթուոյս Միաբանութեան և զարոցներու աշակերտութեան համար այ զատ նուագահանդէս մը տալով ժողովրդապարտ Վարժարանի սրահին մէջ, մարտ 16-ին:

Քէմանչիստին արեւելեան ու տօնմիկ երաժշտութիւնը, որ նրբութեան, զգայնութեան և մեղեդիի հմայքը կը մարմնացնէ, տարբեր բլլայով ընդհանրապէս եւրոպական յաճօխ րիչ մը ծանր ու խորտորոտ երաժշտութեանէ, ամենէն աւելի կը խօսի մեր, արեւելիցիներու սրտին: Քնրոյշ, պիւնձածան, մերթ ճաւղոտն և մերթ յազումնայից ու կորովի է Պր. Ռուբէնի **ՔԷՄԱՆՉԷ**ն, թէև ո՛չ այնչափ ուժեղ ու ծաւալուն որքան կրնար բլլալ ջութակը:

Քէմանչիստին զործիրն ալ ինքնին տեսնելու բան է. հարիւր քսան տարուան քէմանչէ մըն է ան, վրան զարդարուած ոսկեայ նրբակերտ մետաղներով

և յիշատակներով՝ անոր զեղզեղանքներուն հիացողներուն կողմէ:

Քէմանչխարը նուազեց զեղեցիկ կտորներ, ինչպէս Վարդը, Տըլէ Եաման, Կալի Երզը, փունջեր՝ Անուշ օրերէլէն, Սայեաթ Նոփայէն, Սրինգը, Կրուսներ, ևն. — տասնեւիցե կտոր: Արտարայ յայտարարին նուազեց նաեւ պարսկական եղանակ մը, չարկան, և Հայաստանը:

Մէկ ու կէս ժամուան այս վայելքէն ետը՝ Տեղապահ Սրբազան ջերմ զոհունակութիւն և շնորհակալութիւն յայտնեց Քէմանչխար Գ. Ռուբէնի, յիշելով թէ **Լուսի**, որուն բնիկն է արուեստագէտը, հայրենիքը եղած է ուրիշ քանաստեղծներու և արուեստագէտներու ալ, որոնք նշանաւոր հանդիսացած են: Էրբ քէմանչէին լարերուն պէս մեր սիրտերն ալ իր երաժշտութեան հմայրովը թրթռացուց բաւ Սրբազանը:

**Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք**

Յրանչխական Միարանութեան նորընտիր Կիւստող Գեւ. Հայր Նազարեհնոյ ժակորոցցի Մարտ 13 ուր. օրը իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուա Պարտիարքարանիս իր հետեւորդներով, և Դահլիճին մէջ ընդունուեցաւ Պարտ. Տեղապահ Գեւ. Տ. Մեսրոպ Սրբազանի և Միարանութեան անդամոց կողմանէ:

Հետեւեալ օրը, շորաթ, Տեղապահ Սրբազանը իր հետեւորդներով փոխադարձ այցելութիւն տուա Գեւ. Հայր Կիւստողին, Յրանչխականց վանքը:

Անզլիացի մեծանուն զրագէտ **Պր. Բերհարդ Շոյ** 13 Մարտ ուր. երեկոյին վանք այցելեց անակրնկալօրէն, վսեմ. Սրբ Ռոնալտ Սթորսի յանձնարարականով: Աշխարհաճախ հիւրը կարճատեւ միջոցի մը համար միայն երուսաղէմ եկած էր: Հակառակ ժամանակի անյարմարութեան և այցելութեան յանկարծութեան՝ **Պր. Բերհարդ Շոյ** Պարտիարքարանիս զահլիճին մէջ ընդունուեցաւ պատշաճ մեծարանքով:

Երուսաղէմի Վսեմ. Կառավարչի անզլիացի և ամերիկացի հիւրերը, որոնց մէջ կը գտնուէր Ամբրիկեան Մամուլի գլխաւոր ղէմըրբէն **Մր. Ճոն Օյպիս Լակլեն** Մարտ 16-ին վանք այցելեցին: Այցելուները առաջնորդուեցան Ս. Յակոբայ Տաճարը, ուր ջոյց արուեցան իրենց եկեղեցական հնութիւններ: Ապա, յարգելի հիւրերը Պարտիարքարանիս զահլիճին մէջ ընդունուեցան Պարտ. Տեղապահ Գեւ. Տ. Մեսրոպ Սրբազանի կողմանէ:

Երուսաղէմի Եթովպական Հիւպատոս **Մ. Բավոյ** Մենամենոյ Պարտիարքարան այցելեց Մարտ 19-ին, և Գեւ. Պարտ. Տեղապահ Սրբազանին անձամբ յանձնեց Եթովպիոյ Վեհափառ Հայլէ Սէլլասէ Ա. Թագաւորին գրութիւնը, որով զոհունակութիւն կը յայտնէր Ն. Վեհափառութիւնը իր Թագադրութեան առթիւ Ս. Աթուէս զրկուած շնորհաւորական ուղերձին համար:

Հետեւեալ օրը, 20 Մարտ, ուրբաթ օրը Գեւ. Տեղապահ Սրբազանը, հետն ունենալով Ա. Թագրման Հոգ. Տ. Պարգեւ վարդապետը, փոխադարձ այցելութեան գնաց Եթովպական Հիւպատոսարանը, և խնդրեց Պ. Հիւպատոսէն Միարանութեան յարգանաց և շնորհակալութեանց զգացումները ներկայացնել Եթովպիոյ Վեհ. Կայսեր:

Հետեւեալը Թագրմանութիւնն է Նորին Վեհափառութենէն ստացուած գրութեան.

**Յարգական Առիւծ Յուդայի  
Հայլէ Սէլլասէ Առաջին  
Բնաւեալ Միոյն Աստուծոյ,  
Թագաւոր Թագաւորաց**

Ե Թ Ո Վ Պ Ի Ո Տ

Մեր ողջոյնները կը ներկայացնենք Ձեր Գերապատութեան: Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Ձեր 1 Նոյեմբեր 1930 — 10462 - 16 նամակին համար, զոր ղրկած էիք Մեր Թագադրութեան առիթով: Կը խնդրենք որ ընդունիք Մեր շնորհակալութիւնները այն բարի զգացումներուն համար, զորս կը տածէք Մեզի, Մեր Հայրենիքին եթովպիոյ և Մեր ժողովուրդին հանդէպ: 26 Փետրուար 1931.

ԱՍՏԻՍ ԱԳԷՊԱ:

Պարտ. Տեղապահ Գեւ. Տ. Մեսրոպ Սրբազան, հետն ունենալով Ա. Թագրման Տ. Պարգեւ վարդապետը, Մարտ 26-ին այցելութիւն տուա քաղաքիս եզրկատական Ընդհ. Հիւպատոս **Վսեմ. Սաորդ Պէլլի**, և իր շնորհաւորութիւնները ներկայացուց Եզրկատոսի Վեհափառ Յուսատ Ա. Թագաւորին ծննդեան տարեգործին առթիւ:

Վերահաս Չատակական Տօներու առթիւ քաղաքս ժամանեցին Մեծն Բրիտանիոյ Արքունիքէն **Ն. Բ. Իշխանուհի Ալիս-Մառի Արլոնի Կոմսուհի** և իր ամուսինը՝ **Ն. Բ. Արլոնի Կոմսը**, Ընդհ. Կառավարիչ Հարաւ-Ափրիկէի, որոնք հիւրերն են Պաղեստինի Վսեմ. Բարձր Կոմիտէին:

27 Մարտ 1931. ուրբաթ օրը, բարձրաստիճան հիւրերը, իրենց շքախումբով և Բարձր Կոմիտէութեան ու Կառավարութեան ներկայացուցիչներուն առաջնորդութեամբ այցելեցին Ս. Յարութեան Տաճարը, ուր Աւագ Դրան առջեւ ընդունուեցան Հայ, Յոյն և Լատին Պարտիարքութեանց ներկայացուցիչներուն և Ս. Յարութեան Տաճարի երեք ազգաց

Տեսուչներուն կողմէ եւ առաջնորդուեցան Սրբա-  
վայրի ընդ մասերը:

● Նոյն օրը կէսօրէն վերջ ժամը 3-ին այցելեցին  
Բեթղեմէմ, եւ հոն ալ մինչնոյն շքով ընդունուելով՝  
առաջնորդուեցան Ս. Իննդեան Այրը եւ Սրբավայրի  
յարակից մասերը: Իսկ Մարտ 29, կիրակի օրը, գա-  
ցին Ս. Աստուածածնայ Տաճարն ի Գեթեմանի, եւ  
ընդունուեցան Հայ եւ Յոյն Պատրիարքարանի ներ-  
կայացուցիչներուն եւ Ս. Աստուածածնայ Տաճարի  
Հայ եւ Յոյն Տեսուչներուն կողմանէ:

Պատրիարքարանիս կողմէ սոյն ընդունելութեանց  
ներկայ գտնուեցան Նոզ. Տ. Տ. Կիրեղ, Պարգեւ եւ  
Շաւարշ վարդապետները:

● Եօթնեակ մը յետոյ՝ Կ. Բ. Կոմսուխի ու  
Կամար իրենց առաջնորդող Երուսաղէմի Վսեմ.  
Կառավարիչին, Բարձր Կոմիտերութեան ներկայա-  
ցուցչին եւ ուրիշ հետաւորներու հետ սպրիլ 4-ին  
կէսօրէ առաջ Վանքս այցելեցին՝ Ս. Յակոբեանց  
Տաճարը տեսնելու համար: Իրենց ցուցուեցան հիւ-  
րաններ եւ եկեղեցական զգեստներ եւ առաքա-  
ններ: Տաճարէն առաջնորդուեցան Պատրիարքարան,  
ուր Տեղապահ Սրբազանը, հետն ունենալով վար-  
դապետներ, ընդունեցաւ զիրենք եւ ուր մեծարուե-  
ցան պատշաճ հիւրասիրութեամբ:

Բարձրապատիւ հիւրերը իրենց այս այցելու-  
թեան առիթով ամբողջ մէկու կէս ժամ մնացին  
Վանուցս մէջ, մեծապէս հետաքրքրուելով իրենց  
տեսած բաներուն Հյոց. եկեղեցիի պաղեսարինեան այս  
հաստատութեան մասին:

ՆՈՒԷՐ՝ Ս. ԱԹՈՒՈՅՍ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻՆ

Տ. Սարգիս Եպիսկ. Տ. Սարգիսեանի կողմէ

1. Biblia Sacra, Խոալերէն Ս. Գիրք.— 2. Ռդէնի  
Հնախօսութիւն, Հատոր Ա. Բ. Գ.— 3. Նոր Կտա-  
կարան, վերջը քանի մը թուղթ պակաս.— 4. Ազ-  
գերուն Բարեկամը, տեսարակ սպարհեալ.— 5. Ձէ-  
թունի Վրէժը.— 6. Խորանի Շուքեր.— 7. Աստուա-  
ծարանութիւն Տեսական, Հ. Եղուարդ Հիւրմիւզ,  
Հատոր Ա.— 8. Գիրք Առաքինութեանց, Տպ. Վե-  
նետիկ 1721.— 9. Աստուծոյ Բնաբը, Ոստմնասի-  
րութիւն Ս. Գրոց:

Տիկին Եսկուսի Զրահեանի կողմէ  
ձեռամբ Տ. Սարգիս Եպիսկ. ի

1. Գիրք Կոչեցեալ Ձէն Հոգեւոր. Յակոբ Պատ-  
րիարք Նալբանի.— 2. Երանելոյն Սարգիս Շնոր-  
հայի Վարդապետի Մեկնութիւն Կաթողիկոսաց Բժը-  
թոյն Ս. Յակոբայ.— 3. Ս. Օգոստինոսի Յաղագս  
Քաղարին Աստուծոյ.— 4. Մեկնութիւն Սրբոց Եր-  
կտասան Մարգարէից.— 5. Նարեկ, զբարբ սպ.  
Պոլիս 1850.— 6. Մեկնութիւն Չորեքտասան Բժը-  
թոց Երանելոյն Պողոսի, Հատ. Ա. Բ.— 7. Բառա-  
գիրք Հայկազեան Լեզուի, տպ. Վենետիկ 1769.—

8. Ժողովուրդներուն Ազատութիւնը, տեսարակ ար-  
պարհեալ.— 9. Յրաներէն Բուարանութիւն մը.—  
10. Տեսութիւն Նոր Կտակարանաց, Հատ. Գ.— 11.  
Հայտատա Բրբերէն Քրիստոնէական.— 12. Մեկ-  
նութիւն Բժըթոյն Պողոսի առ Եփեսացիս. տպգր. Ե-  
րուսաղէմ 1850.— 13. Գիրք Օրինակաց եւ նմանու-  
թեանց.— 14. Մեկնութիւն Չորեքտասան Բժըթոց  
Պողոսի, Հատոր Ա. Բ. Գ.— 15. Մեկնութիւն Աւե-  
տարանչաց. տպ. Վենետիկ 1737:

Տ. Տրդատ Ա. Բեմչ. Պոլսեանի կողմէ

1. Փիլիսոփայութիւն, Անտոն Կո վանոյ Աստուա-  
ծարան Վարդապետի. Հ Հատոր.— 2. Արուեստ Բը-  
նական կամ Տրամարանութիւն Փրանկիսկոսի Սուա-  
ւէի.— 3. Լիակատար Վարք Սրբոց. Ազոնցի, Հա-  
տոր 2, 3, 4, 8, 9, 10, 11, 12.— 4. Գիրք Օրի-  
նակաց եւ նմանութեանց. տպ. Վենետիկ 1750ին.—  
5. Պատմութիւն Վարուց Յովհաննու Ոսկերեանի.—  
տպ. Վենետիկ 1751ին.— 6. Հին Ձեռագիր փորրիկ  
Հատոր մը 1611ին գրուած, սկիզբէն կը պակսին.—  
7. Մեկնութիւն Նարեկի, Նալբան Պատրիարքի կող-  
մէ գրուած.— 8. Թանգարան Խրատու, Հատ. Ա.—  
9. Բնական Օրէնք, Հեղինակ Մեսրոպ Վարդապետ  
Աղաչազգեան.— 10. Դարասյատում. Հ. Ղուկաս  
Վրդ. Ինճիճեան, 1824 Վենետիկ.— 11. Նուագարան  
Օրմնութեանց.— 12. Հրաշք արարեալ օրմնարանե-  
ալ Կուսէն Մարիամայ Աստուածածնի.— 13. Պա-  
պականք եւ Բրթէսթանք.— 14. Ներքող Որդոց  
Որտման, ի տպարանի Մայր Եկեղեցոյն Աստուա-  
ծածնի.— 15. Անգիր Դպրութիւն, Վահան Վրդ. Տ.  
Մինասեան.— 16. Ազգարանութիւն Տոմիւն Յարեթ-  
եան, 1752ին Վենետիկ տպուած.— 17. Եղանակ  
Բիւզանդեան Բազմավէպ, Վենետիկ.— 18. Հին Ձե-  
ռագիր Շարական, սկիզբէն էջեր պակաս.— 19. Հո-  
գեշա՞մ Մտածութիւն Աստուածային Բանից. տպ.  
Վիննա.— 20. ճարտասանութիւն բովանդակեալ ի  
հինգ գիրք.— 21. Մկրտիչ Պէշիկեաշլեանի կեանքն  
ու գործը.— 22. Մեկնութիւն Եօթնոց Բժըթոց Կա-  
թողիկոսաց.— 23. Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին  
Մարկոսի. Անդրէաս Վրդ.— 24. Ներքող Գրիգորի  
Նարեկեցոյ.— 25. Աստուածաշունչ Աշխարհայար.—  
26. Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթեւացոյ.—  
27. Մեկնութիւն Ժամակարգութեան արարեալ Խոս-  
րովու Անձեւացեաց Եպս. ի եւ կարգադրեալ Մովսէսի  
Գիտնական Վարդապետի.— 28. Քննութիւն Խըն-  
դրոց.— 29. Ս. Օգոստինոսի Յաղագս Քաղարին Ա-  
ստուծոյ, Հատոր Ա. եւ Բ.— 30. Մաշտոց Հատըն-  
տար Հաւարմանց ի Մեծ Մաշտոցէն Յունաց որ կոչի  
Էֆթողիթոն.— 31. Համառօտութիւն Քրիստոնէական  
Աստուածարանութեան.— 32. Քարոզը համառօտը  
Եօթն Կարգեան, Հատոր Ա.— 33. Խորհրդատեար  
Սրբոյ Պատարագի բոս արարողութեան Հայաստանե-  
րոց Եկեղեցոյն եւ բոս օրինակին տպարկելոյ ի  
Հում, ի Թրիէսթ, ի Տպարանի Միսիթարեանց, 1803.—  
34. Գիրք Կոչեցեալ Ձէն Հոգեւոր.— 35. Մկրտիչ  
Պէշիկեաշլեանի Քերթուածներն ու ճառերը: